ԿԱՐԾԻՔ

Էրիկ Զավենի Մարտիրոսյանի «Դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստության օպտիմալացումն աթլետիկական վարժությունների կիրառմամբ» թեմայով ատենախոսության ներկայացված ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Հեղինակը ատենախոսական աշխատանքում անդրադարձել է կարևոր և ժամանակի պահանջներին համապատասխան արդիական հիմնահարցի՝ դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստության մակարդակի բարելավմանը, օպտիմալացմանը:

Առաջադրված խնդրի հիմնավորումը արտացոլվում է ոչ միայն ներածության բաժնում, այլ նաև ատենախոսության առաջին գլխի ենթագլուխներում: Առաջին ենթագլխում ներկայացված են նորարարական տեխնոլոգիաները ֆիզիկական դաստիարակության համակարգում: Հետազոտության նպատակից և տրամաբանությունից ելնելով, հեղինակը ուսումնասիրել է դրանցից մի քանիսը՝ շարժողական ակտիվության ծավալի մեծացումը, մարզակողմնորոշիչ ֆիզիկական դաստիարակությունը և միջավայրի կողմնորոշիչ մոտեցման կիրառումը: Երկրորդ ենթագլխում նկարագրված են ֆիզիկական դաստիարակության համակարգում աթլետիկական վարժությունների առաջնային դերի, ինչպես նաև առողջարարական, դաստիարակչական, կիրառական և կրթական նշանակության մասին: Երրորդ՝ արտադասարանական պարապմունքները՝ որպես դպրոցականների ֆիզիկական պատրաստության օպտիմալացման միջոց, ենթագլխում խոսվում է վերջին շրջանում աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, դպրոցականների առողջության, ֆիզիկական զարգացման ու շարժողական պատրաստվածության ցածր մակարդակի, ինչպես նաև արտադասարանական պարապմունքների միջոցով շարժողական ակտիվության կարևորության մասին: Առաջին գլուխը եզրափակվում է դպրոցականների սեռատարիքային զարգացման առանձնահատկությունները և ֆիզիկական դաստիարակությունը ենթագլուխով, որտեղ խոսվում է դպրոցականների ֆիզիկական դաստիարակության և մարզական պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող տարիքային պարբերականացման սահմանների մասին:

Այսպիսով առաջին գլուխը, որը կրում է «Ուսումնասիրվող հիմնահարցի տեսական վերլուծությունը» խորագիրը ատենախոսը լիովին բացահայտում և պարզաբանում է ընտրած թեմային վերաբերող տեսական հիմնահարցերը:

Նման բազմաբովանդակ վերլուծությունը բավականին մեծ թվով գրական աղբյուրների ուսումնասիրման արդյունք է: Ընդհանուր առմամբ հեղինակի կողմից ուսումնասիրվել և վերլուծվել է 194 գրական աղբյուր, որոնցից 152 օտարալեզու են, որից 12 %-ը՝ վերջին 10 տարիների, իսկ 8%-ը՝ վերջին 5 տարիների հրատարակված: Այս ամենը ցույց է տալիս, որ ատենախոսը հետևողականորեն ուշադրության կենտրոնում է պահում թեմային վերաբերող հիմնահարցերի ուսումնասիրումը:

Գիտամեթոդական գրականության աղբյուրների վերլուծության արդյունքում հեղինակը հանգել է այն մտքին, որ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ժամանակակից դասը կազմակերպական մի շարք առումներով դեռևս չի ապահովում դպրոցականների առողջարարական և ֆիզիկական պատրաստվածության բավարար արդյունք, որի հետևանքով առաջանում է արտադասարանական լրացուցիչ պարապմունքների անհրաժեշտություն:

Երկրորդ գլխում ատենախոսի կողմից հստակորեն առաջարկվել և ձևակերպվել են հետազոտության առջև դրված մասնակի խնդիրներ, որոնք համահունչ են գիտական աշխատանքի տրամաբանության համատեքստին:

Ատենախոսական աշխատանքի երկրորդ գլուխը վերաբերում է 10-13 տարեկան երկսեռ դպրոցականների ֆիզիկական զարգացման և շարժողական ընդունակությունների մշտադիտարկման արդյունքների վերլուծությանը: Հեղինակի կողմից կազմակերպված մշտադիտարկմանը մասնակցել են 10-13 տարեկան երկսեռ 560 աշակերտ: Այն բացահայտել է հետազոտվողների ֆիզիկական զարգացման և շարժողական ընդունակությունների որոշ օրինաչափություններ, որոնք հիմք են հանդիսացել մշակել այդ ցուցանիշների գնահատման մոդելային սանդղակները: Այս դեպքում անհրաժեշտ է նշել գիտական հետազոտության այն արժեքավոր կողմերից մեկը, որ 10-13 տարեկան աշակերտների համար նման մոդելային սանդղակներ 2005թ-ից մինչ այսօր չի իրականացվել: Մինչդեռ ժամանակակից գիտության պնդմամբ, նման սանդղակները կորցնում են իրենց արդիականությունը 5-6 տարի հետո: Մշակելով նման գնահատման մոդելային սանդղակներ հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ այսօր դպրոցականները իրենց ֆիզիկական զարգացման և շարժողական ընդունակությունների ցուցանիշներով համապատասխանում են միջին և միջինից ցածր ցուցանիշների շեմին:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված է մանկավարժական գիտափորձի ողջ մեթոդաբանությունը և գործընթացը: Այն իր ենթագլուխներով շարադրված է բավականին հստակ, տրամաբանված և հիմնավորված:

Այս գլխում հեղինակը քննարկել է մի շարք հանգուցային հարցեր, որոնք վերաբերում են ֆիզիկական դաստիարակության գործընթացի օպտիմալացմանը՝ աթլետիկական վարժությունների կիրառմամբ:

Աշխատանքի ընթացքում իրականացվել է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցիչների սոցիոլոգիական հարցում, որին մասնակցել են հանրապետության բոլոր մարզերի և Երևան քաղաքի թվով 260 ուսուցիչ: Արդյունքներն ամփոփված են երրորդ ենթագլխում՝ մատչելի գծապատկերի տեսքով: Իրականացվել է նաև «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի չափորոշիչ և ծրագրի՝ տարբեր ձևաչափերով վերլուծություն: Հաշվի առնելով մշտադիտարկման, սոցիոլոգիական հարցման, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրի վերլուծության արդյունքները, ատենախոսը մշակել է արտադասարանական պարապմունքների ծրագիր աթլետիկական վարժությունների կիրառմամբ:

Փորձարարական ծրագրի բովանդակությունը մշակված է 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների երկսեռ աշակերտների համար: Այս բաժնում ներկայացված է նաև արտադասարանական պարապմունքների կոնսպեկտների օրինակներ:

Աշխատանքի երրորդ գլխի հինգերորդ ենթագլխը ամբողջովին ներկայացնում է դեռահաս դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում հեղինակային արտադասարանական ծրագրի ներդրման և արդյունքների ամփոփմանը: Գիտափորձին մասնակցել են 5-7-րդ դասարանների 360 երկսեռ աշակերտ:

Արդյունքները վկայում են, որ գիտափորձի ավարտին փորձարարական խմբի աշակերտները ստուգողական խմբին գերազանցում էին ոչ միայն իրենց ֆիզիկական պատրաստության ցուցանիշներով, այլև մոդելային սանդղակների արդյունքներով համապատասխանում էին միջինից բարձր և բարձր ցուցանիշներին: Այդ ամենը պարզ և մատչելի արտացոլված է ատենախոսական աշխատանքի համապատասխան աղյուսակներում և գծապատկերներում:

Աշխատանքի ընթացքում իրականացվել է նաև գիտափորձի մասնակիցների աշխատունակության գնահատման, ուշադրության կենտրոնացման և ընկալման ցուցանիշների գնահատում, որոնք աղյուսակի և գծապատկերների տեսքով ներկայացված են աշխատանքում:

Ատենախոսական աշխատանքի ավարտին հեղինակը հանգել է ութ կետից բաղկացած եզրակացությունների, որոնք տալիս են առաջադրված խնդիրների հիմնավոր պատասխանները: Հեղինակն ունի նաև որոշակի գործնական առաջարկություններ, որոնք ուղղված են ֆիզիկական դաստիարակության գործընթացի բարելավմանը՝ արտադասարանական լրացուցիչ պարապմունքների միջոցով՝ կիրառելով աթլետիկական վարժություններ:

Այսպիսով, ամփոփելով և արժևորելով Էրիկ Մարտիրոսյանի ատենախոսական աշխատանքը հարկ եմ համարում դիտարկել որոշ բացթողումներ՝

1. Ատենախոսական աշխատանքը հագեցված է բավականին շատ թվական տվյալներով, ուստի մեր կարծիքով կարելի էր մշակված մոդելային սանդղակները տեղափոխել հավելվածների բաժին:
2. Առաջարկված արտադասարանական ծրագրի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վազքային բնույթի վարժությունները գերակշռում են ցատկային և նետումային վարժություններին: Հիմնավորեք:
3. Ատենախոսությունում կան նախադասություններ, մտքեր, որոնք խմբագրման կարիք ունեն, առկա է նաև տեխնիկական բացթողումներ:
4. Ինչպես հայտնի է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասի ընթացքում նախատեսվում է լուծել 2-5 խնդիր: Բոլոր դեպքերում Դուք ընտրել եք նվազագույնը՝ երկու խնդիր, ինչո՞վ կհիմնավորեք:

Ընդհանուր առմամբ ատենախոսությունն ավարտուն, հաջողված գիտական աշխատանք է, իր գիտական նորույթով կատարած հետազոտության արդյունքների հավաստիությամբ, եզրակացություններով և գործնական առարարկություններով հիմնավորված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Էրիկ Զավենի Մարտիրոսյանի «Դեռահաս դպրոցականների ֆիզիկական պատրաստության օպտիմալացումն աթլետիկական վարժությունների կիրառմամբ» թեմայով ատենախոսական աշխատանքը, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, կարևոր տեսական և կիրառական նշանակություն ունի մատաղ սերնդի ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացման համար:

Ատենախոսական աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտական թվանիշի, և հեղինակը արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդիմախոս՝
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի ֆիզիկական դաստիարակության,
ԱԻ և ՔՊ ամբիոնի վարիչ մ.գ.թ., դոցենտ՝ Հ. Հ. Գաբրիելյան

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆիզիկական դաստիարակության, ԱԻ և ՔՊ ամբիոնի վարիչ մ.գ.թ. դոցենտ՝ Հ. Հ. Գաբրիելյան ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՀՊՏՀ-ի գիտ. քարտուղար՝ Ն. Հ. Դարբինյան

«13» 10 2020 թ.